ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ՆՈՐ ԱՐՏԱԳԵՐՍԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆ

РЕСПУБЛИКА АРМЕНИЯ
АРМАВИРСКИЙ МАРЗ
МУНИЦИПАЛИТЕТ НОР АРТАГЕРСА

---

27 -ը սեպտեմբերի, 2013 թվական

Թիվ- 89

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ
ՊԱՐՈՆ Ա. ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆԻՆ

ՀԱՐԳԱՐԺԱՆ ՊԱՐՈՆ ՄԱՐԶՊԵՏ

Նոր Արտագերսի գյուղապետարանը կից Ձեզ է ներկայացնում համայնքի ավագանու 2013 թվականի սեպտեմբերի 25-ին կայացած թիվ 5 նիստի որոշումները:

Առդիր 10 թերթ

ՆՈՐ ԱՐՏԱԳԵՐՍ ՀԱՄԱՅՆՔԻ
ՂԵԿԱՎԱՐ Ս. ՅԱԿՈԲՅԱՆ

Հայաստանի Հանրապետության
Արմավիրի մարզի Նոր Արտագերս
գյուղական համայնքի ավագանու
25 դեկտեմբերի 2013 թվականի
թիվ- 5 նիստի որոշման

# ՕՐԱԿԱՐԳ

1. Օրակարգի հաստատում:

Զեկ.՝ Լ. Վասիլյան / աշխատակազմի քարտուղար /

2. Համայնքի վարչական տարածքում 2014թ. տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերի սահմանում:

Զեկ.՝ Ս. Հակոբյան /համայնքի ղեկավար/

3. Համայնքի միջնակարգ դպրոցին դրամական օգնություն տրամադրելու մասին:

Զեկ.՝ Գ. Վարդանյան /գլխ. մասնագետ/

4. Համայնքի սոցիալական անապահով ընտանիքներին դրամական օգնություն ցուցաբերելու մասին :

Զեկ.՝ Գ. Վարդանյան /գլխ. մասնագետ/

5. Բյուջեի փոփոխություն

Զեկ.՝ Գ. Վարդանյան /գլխ. մասնագետ/

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ ԱՐՏԱԳԵՐՍ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՈՒՄ

25 սեպտեմբերի, 2013 թվական N –1

### ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 4-րդ մասով՝

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Նոր Արտագերս գյուղական համայնքի ավագանու 25-ը սեպտեմբերի 2013 թվականի թիվ 5 նիստի օրակարգը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Ավագանիներ
1. Բ. Ավդիշյան
2. Մ. Հովհաննիսյան
3. Հ. Մուրադյան
4. Հ. Այվազյան
5. Ջ. Ջավոյան

ՆՈՐ ԱՐՏԱԳԵՐՍ ՀԱՄԱՅՆՔԻ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ ԱՐՏԱԳԵՐՍ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՈՒՄ

25-ը սեպտեմբերի , 2013թվական N –2

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ ԱՐՏԱԳԵՐՍ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ 2014 Թ-Ի ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի առաջին մասի 15 կետով «Տեղական տուրքերի և վճարների մասին» ՀՀ օրենքի 8, 9, և 10-րդ հոդվածներով «իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 56-րդ հոդվածի 3-րդ մասով որոշում է՝

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է

1. Հաստատել Արմավիրի մարզի Նոր Արտագերս գյուղական համայնքի վարչական տարածքում 2014թ-ի համար նախատեսված տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող 10- րդ օրը:

Ավագանիներ՝
1. Բ. Ավդիշյան
2. Մ. Հովհաննիսյան
3. Հ. Մուրադյան
4. Հ. Այվազյան
5. Զ. Զավոյան

ՆՈՐ ԱՐՏԱԳԵՐՍ ՀԱՄԱՅՆՔԻ

ՂԵԿԱՎԱՐ՝ Ս. ՀԱԿՈԲՅԱՆ

Հավելված
Հայաստանի Հանրապետության
Արմավիրի մարզի Նոր Արտագերս
գյուղական համայնքի ավագանու
2013 թ. դեկտեմբերի 25-ի թիվ 5նիստի
N 2-Ն որոշման

ՑԱՆԿ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ ԱՐՏԱԳԵՐՍ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

1.Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ նոր շենքերի, շինանյութերի (ներառյալ ոչ հիմնական) շինությունների (տեղադրման) թույլատվության համար տեղական տուրքը սահմանել ՝

հիմնական օբյեկտների համար՝

ա) մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում ՝ այգեգործական (ամառանոցային) տների, ինչպես նաև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող և հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների համար 5000 դրամ.

բ) սույն կետի «ա» ենթակետով չնախատեսված օբյեկտների համար՝

բա) 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 10000 դրամ,

բբ) 501- ից մինչև 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 10000 դրամ,

բգ) 1001 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 15000 դրամ,

ոչ հիմնական շինությունանների տեղադրման համար՝

գ) մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 1500 դրամ,

դ) 20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 2500 դրամ:

2. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման, արդիականացման, աշխատանքների (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ շինարարության թույլտվության չպահանջվող դեպքերի) համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝

ա) չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափսերն ընդլայնող այլ կառույցների ( այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքի գործառական նշանակության փոփոխություն՝ 1500 դրամ.

բ) բացի օբյեկտի վերակառուցման, ուժեղացման , վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից, նախատեսվում է նաև կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափսերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա, բացի սույն կետի «ա» ենթակետով սահմանված դրույքաչափի, կիրառվում են նաև նոր շինարարության համար սույն հոդվածի 1-ին կետով սահմանված նորմերը՝ օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացման կամ շենքերի գործառական նշանակության փոփոխությու մասով.

գ) նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների ( այդ թվում՝ ստորգետնյա) շինարարության կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա, սույն օրենքի իմաստով, այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար սույն հոդվածի 1-ին կետով սահմանված նորմերը:

3. Համայնքի վարչական տարածքում շենքերի, , շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույլատվության համար տեղական տուրքը սահմանվում է 2500 դրամ:

4. Համայնքի տարածքում ոգելից խմիչքների և (կամ) ծխախոտի արտադրանքի վաճառքի, իսկ

հանրային սննդի օբյեկտներում՝ ոգելից խմիչքների և (կամ) ծխախոտի արտադրանքի իրացման
1) հիմնական շինությունների ներսում վաճառքի (իրացման) կազմակերպման դեպքում՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝6000 դրամ.
2) հիմնական շինությունների ներսում վաճառքի (իրացման) կազմակերպման դեպքում՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝ 7000 դրամ:
5. Համայնքի տարածքում՝
ա) բացօթյա առևտուր կազմակերպելու թույլտվության համա տեղական տուրքը սահմանվում է յուրաքանչյուր օրվա համար՝ 350 դրամ.

բ) հեղուկ վառելիքի, տեխնիկական հեղուկների, հաղուկացված գազերի մանրածախ առևտրի կետերում հեղուկ վառելիքի, տեխնիկական հեղուկների, հաղուկացված գազերի վաճառքի թույլտվության համա տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել 150 000 դրամ:
5[1] Համայնքի տարածքում թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի մանրածախ առուվաճառքի թույլտվության համար տուրքը սահմանել յուրաքանչյուր տարվա համար՝ 50000 դրամ:
6 Համայնքի տարածքում՝ առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտները, բաղնիքները (սաունաները), խաղատները ժամերը 24.00-ից հետո աշխատելու թույլտվության համար՝ տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է՝
ա) առևտրի օբյեկտների համար 25000 դրամ.
բ) հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար՝ 50000 դրամ.
գ) բաղնիքների (սաունաների) համար՝ 200 000 դրամ.
դ/ խաղատների կազմակերպման համար՝ 500000 դրամ
ե) շահումով խաղերի կազմակերպման համար՝ 250 000 դրամ.
զ) վիճակախաղերի կազմակերպման համար՝ 100 000 դրամ.

7 .Յուրաքանչյուր ամսվա համար արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համա մեկ քառակուսի մետրի տեղական տուրքը սահմանվում է՝
ա) ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝1000 դրամ.
բ) թունդ ալկոհոլային (սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս) արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 2500 դրամ.
գ) այլ արտաքին գովազդի համար՝ 500 դրամ.

ե) դատարկ գովազդային վահանակների համար՝ 700 դրամ.
9. Համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ և կրկնօրինակներ տրամադրելու համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է՝ 5000 դրամ:
10. Համայնքի տարածքում մարդատար տաքսու (բացառությամբ երթուղային տաքսիների) ծառայություն իրականացնելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է 5000 դրամ:

Տեղական վճարների դրույքաչափեր՝

1.համայնքի տարածքում շինարարության կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու ու հաստատելու, ավարտված շինարարության շահագործումը փաստագրելու համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանել՝ 5000 դրամ:
2. համայնքի տնօրինության և օգտագործման տակ գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքերում անհրաժեշտ չափագրական և այլ նման աշխատանքների համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանել՝ 3000 դրամ:

3. համայնքի տարածքում մրցույթներ և աճուրդներ կազմակերպելու հետ կապված ծախսերի փոխհատուցման համար մասնակիցներից վճար սահմանել՝ 10000 դրամ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ ԱՐՏԱԳԵՐՍ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՈՒՄ

25-ը սեպտեմբերի, 2013 թվական N –3

# ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ ԱՐՏԱԳԵՐՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑԻՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՈՐՈՇՈՒՄ Է

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 5-րդ կետով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է

1. Համայնքի միջն. դպրոցին տրամադրել 400 000 (չորս հարյուր հազար) դրամական օգնություն, աշակերտներին դպրոցական համազգեստ ձեռք բերելու համար:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Ավագանիներ՝

1. Բ. Ավդիշյան
2. Մ. Հովհաննիսյան
3. Հ. Մուրադյան
4. Հ. Այվազյան
5. Հ. Զավոյան

ՆՈՐ ԱՐՏԱԳԵՐՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ս. Հակոբյան

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ ԱՐՏԱԳԵՐՍ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՈՒՄ

25-ը սեպտեմբերի, 2013 թվական N –4 Ն

### ՆՈՐ ԱՐՏԱԳԵՐՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑ. ԱՆԱՊԱՀՈՎ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 5-րդ կետով, և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է

1, Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Նոր Արտագերս գյուղական համայնքի սոց. անապահով ընտանիքներին տրամադրել դրամակնա օգնություն 335 000 (երեք հարյուր երեսուն հինգ հազար) դրամի չափով համաձայն հավելվածի:

Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Ավագանիներ՝

1. Բ. Ավդիշյան
2. Մ. Հովհաննիսյան
3. Հ. Մուրադյան
4. Հ. Այվազյան
5. Զ Զավոյան

ՆՈՐ ԱՐՏԱԳԵՐՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ս. Հակոբյան

Հավելված
Հայաստանի Հանրապետության
Արմավիրի մարզի Նոր Արտագերս
գյուղական համայնքի ավագանու
25 սեպտեմբերի 2013 թվականի
թիվ- 5 նիստի թիվ 4 որոշման

Սոց. օգնության ցուցակ

| Հ/Հ | Անուն, Ազգանուն, հայրանուն | Գումարի չափը |
|---|---|---|
| 1 | ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԳԱԳԻԿ | 30 000 |
| 2 | ՋԱՎՈՅԱՆ ՍԱՅԻԴ | 30 000 |
| 3 | ՆԵՐՍԻՍՅԱՆ ՎԱՀԱԳՆ | 30 000 |
| 4 | ԱԼԵՔՍԱՆՅԱՆ ԱՐՄԵՆ | 30 000 |
| 5 | ԽՈՒԴՈՅԱՆ ՍԱՅԻԴ | 30 000 |
| 6 | ԱՂԱՋԱՆՅԱՆ ՍԵԴԱ | 15 000 |
| 7 | ՍԵԴՐԱԿՅԱՆ ԱՐՄԵՆ | 30 000 |
| 8 | ՄՈՒՐԱԴՅԱՆ ՎԱՐԱԶԴԱՏ | 30 000 |
| 9 | ԵՂԻԱԶԱՐՅԱՆ ԽԱՉԱՏՈՒՐ | 30 000 |
| 10 | ՎԱՐԴԱՆՅԱՆ ՎԱՅԼԱ | 20 000 |
| 11 | ՄԿՐՏՉՅԱՆ ԳԵՎՈՐԳ | 30 000 |
| 12 | ՎԱՐԴԱՆՅԱՆ ՎԱՐԴԱՆ | 30 000 |

ՆՈՐ ԱՐՏԱԳԵՐՍ ՀԱՄԱՅՆՔԻ
ՂԵԿԱՎԱՐ՝ Ս. Հակոբյան

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ ԱՐՏԱԳԵՐՍ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՈՒՄ

25-ը սեպտեմբերի, 2013 թվական N –5 Ն

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ ԱՐՏԱԳԵՐՍ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2013 Թ-Ի ՀՈՒԼԻՍԻ 25-Ի ԹԻՎ 4 ՆԻՍՏԻ ԹԻՎ 4 Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի առաջին մասի 3-րդ կետով, «Իրավական ակտերի մասին » ՀՀ 70-րդ հոդվածի 2-րդ մասի առաջին կետով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Նոր Արտագերս գյուղական համայնքի 2013 թ-ի հուլիսի 25-ի (Բյուջեում փոփոխություն կատարելու մասին) թիվ 4 նիստի թիվ 4 Ն որոշման մեջ կատարել փոփոխություն համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման հաջորդող 10-րդ օրը

Ավագանիներ՝

1. Բ. Ավդիշյան
2. Մ. Հովհաննիսյան
3. Հ. Մուրադյան
4. Հ. Այվազյան
5. Զ. Զավոյան

ՆՈՐ ԱՐՏԱԳԵՐՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ս. Հակոբյան

Հավելված
Հայաստանի Հանրապետության
Արմավիրի մարզի Նոր Արտագերս
գյուղական համայնքի ավագանու
25 սեպտեմբերի 2013 թվականի
թիվ- 5 նիստի թիվ 5 Ն որոշման

# ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ ԱՐՏԱԳԵՐՍ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ՝ 25.09.2013Թ. ԲՅՈՒՋԵԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ

## ԵԿԱՄՈՒՏՆԵՐ

| ՀՈԴՎԱԾԸ | ԱՎԵԼԱՑՈՒՄ /հազ. դրամ | ՊԱԿԱՍԵՑՈՒՄ/հազ. դրամ |
|---|---|---|
| 1257 սուբվենցիաներ | 33,9 | |

## ԾԱԽՍԵՐ

| ԲԱԺԻՆ, ԽՈՒՄԲ, ԵՆԹԱԽՈՒՄԲ | ՀՈԴՎԱԾ | ԱՎԵԼԱՑՈՒՄ /հազ. դրամ | ՊԱԿԱՍԵՑՈՒՄ/հազ. դրամ |
|---|---|---|---|
| 01.1.1 | 4112 | | 380,0 |
| 01.1.1 | 4221 | | 120,0 |
| 01.1.1 | 4264 | | 50,0 |
| 01.1.1 | 4212 | 33.9 | |
| 06.3.1 | 4212 | 700,0 | |
| 10.7.1 | 4729 | | 300,0 |
| 10.7.1 | 4819 | 150,0 | |
| Ընդամենը | | 883,9 | 850,0 |

ՆՈՐ ԱՐՏԱԳԵՐՍ ՀԱՄԱՅՆՔԻ
ՂԵԿԱՎԱՐ՝ Ս. ՀԱԿՈԲՅԱՆ

ԳԼԽ. ՀԱՇՎԱՊԱՀ՝ Գ. ՎԱՐԴԱՆՅԱՆ